է մարդկանց, նրանց վէրքերի վրայ դնում են ծաւած հում լոբի։ Բայց եթէ կատաղած գազանին կարողանում են սպանել, խլոյն կիսում են նրա մարմնի մէջտեղից և խածուած հիւանդին անց են կացնում երկու մաս արուած դիակի կըտորների մէջից և կատաղած գազանի մազերից խուզում, խանձում և դնում են վէրքերի վրայ և այսպիսով հաւատում են, որ իրենց հիւանդները կրժշկուեն։ Իսկ ոմանք էլ տանում են ուխտ «Սարի-փիր»—դեղին սուրբ ասուած տեղը, որ գտնուում է Միրզաբէկլու Թրքախօս Հայաղաւան գիւղի հարաւային կողմը մի խիտ անտառի մէջ, ուր կան երկու տապանաքարեր՝ արաբական լեզուի արձանագրութեամբ։ Այս տեղ են տանում նաև այնպիսի մարդկանց, որոնք դեղնութիւն ունեն և կամ ջրգողութեամբ փորերը ուռած են։ Փորերը քսել են տալիս տապանաքարերին, որպէս զի նրանց երեսի դեղնութիւնն ու փորի ուռոյցքները անցնեն — անհետանան ընդ միշտ։ Եթէ մէկի տան բակում շունն սկսի անսովոր կերպով ոռնալ ծոր տալով, լսողների վրայ մի սարսափելի սարսռոց է ձգում և ժողովրդի կարծիքով մի սարսափելի դժբախտութեան նշան է համարւում։ Հէնց այս իսկ պատճառով էլ ամեն կողմից կսկսեն պոռալ, որ շունը ոռնալուց դադարի։ Բայց եթէ չդադարէ, շան տէրը խլոյն նրան գնդակահար կանէ, որպէսզի մի որևէ դժբախտութիւն չպատահի իրենց, կամ հարևանների տան մէջ։ Եթէ ագռաւը գայ և տան մօտ ծառի վրայ թառած սկսէ «ղռա—ղռա»